ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայոց լեզու և գրականություն
առարկա

ԹԵՄԱ՝ Հայոց լեզվի գործնական աշխատանքները որպես սովորողների ինքնուրույն ուսումնառությանը նպաստող միջոց

Կազմեց՝ Արաքսյա Արարատի Մովսիսյան
/անուն, ազգանուն, հայրանուն/

«Կապանի N 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
/դպրոցի անվանումը/

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

«Կապանի N 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ
/վերապատրաստող կազմակերպության անվանումը/

ԿԱՊԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Նախաբան	էջ 3
2.	Հետազոտական համատեքստ	էջ 5
3.	Գործնական համատեքստ	էջ 8
4.	Հետազոտական ընթացք	էջ 12
5.	Տվյալների մշակում և վերլուծություն	էջ 18
6.	Եզրակացություն	էջ 20
7.	Գրականություն	էջ 21

ՆԱԽԱԲԱՆ

Սոցիալական նոր տեղաշարժերի և կրթական ոլորտի բարեփոխումների այս ժամանակաշրջանում դպրոցը կոչված է դաստիարակելու հասարակության կարիքներին համապատասխան գիտելիքներով և հմտություններով, համամարդկային և ազգային արժեքներ կրող մարդ և քաղաքացի: Այս նպատակի իրագործման առաջին քայլը ուսուցման որակի բարելավումն է, քանի որ միայն համակարգված և խորը գիտելիքները կարող են վերածել կարողությունների և հմտությունների: Իհարկե, ուսուցիչները գիտակցում են, որ ուսուցման ավանդական ձևերով անհնար է հասնել ցանկալի արդյունքի, սակայն նորի կիրառումն էլ պետք է նպատակային լինի:

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցներ, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան» (1989թ., ՄԱԿ) և «Կրթությունը բոլորի համար» համաշխարհային հռչակագիրը (2002թ., Դակար):

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Բիզնես ընկերությունները հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին, փողերին ու ազդել նրա վրա: Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը:

Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարապ չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով, սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը հատկապես գործնական աշխատանքներով:



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան: Այս հանգամանքը շատ կարևոր է, քանի որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված: Խորհուրդ է տրվում օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում ենք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:

Սույն պատկերում երկու դեպքում էլ օգտագործված է տառերի նույն շարքը: Պարզապես երկրորդ դեպքում տառերի կապակցումն իմաստալից է: Նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից: Սրանից կարելի է կարևոր եզրահանգում կատարել՝ որքան շատ գիտելիքներ ունեք, այնքան հեշտ ու շատ կարող եք նոր բաներ սովորել: Եթե կարճաժամկետ հիշողության առանձնահատկությունը սահմանափակ լինելն է, ապա երկարաժամկետ հիշողության առանձնահատկությունն այն է, որ այնտեղ մնում է խորքային առումով լավ հասկացած գիտելիքը: Այսինքն՝ այն ամենը, ինչը մենք մակերեսային ենք հասկացել, մնայուն չէ: Ցավոք, մեր կրթական համակարգը կառուցված է այնպես, որ մենք ավելի շատ մակերեսային բաներ ենք սովորում: Մեր կրթական համակարգը վազք է կրթական ծրագրի հետևից, ինչի պատճառով աշակերտները չեն հասցնում խորքային գիտելիքներ ձեռք բերել: Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն: Ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը: Վերջին տարիներին շատ մարդիկ փորձում են գիտելիքն ու մտածողությունը հակադրել իրար: Հաճախ ենք լսում արտահայտություններ, որ Google-ն ամեն ինչ գիտի: Հետևաբար՝ մեր խնդիրը գիտելիք ունենալը չէ, այլ մտածողության հմտությունները զարգացնելը: Բայց այդպես չէ: Այսօր էլ հիմնային գիտելիքը ուսուցման հիմքն է: Ոչ մի բժիշկ չի կարող բարդ վիրահատություններ անել առանց հիմնային գիտելիքի: Ոչ մի պատմաբան չի կարող վերլուծություններ անել առանց անունների և թվականների հիշելու: Նման տեսակետ արտահայտողները գիտելիքը շփոթում են տեղեկույթի հետ: Google-ն ունի տեղեկույթ: Իսկ գիտելիքն այսօր էլ կարևոր է, քանի որ, ինչպես շատ դիպուկ նշում է ամերիկացի հոգեբան Դանիել Ուիլինգհամը, եթե չկա գիտելիք, ապա ինչի՞ մասին ենք մենք մտածում: Այլ հարց է, որ պարզապես գիտելիք ունենալը բավարար չէ: Բայց առանց գիտելիքի մտածելն էլ վտանգավոր է: Ճիշտ չէ նաև հիշողությունն ու մտածողությունը հակադրելը: Այս մասին էլ Ուիլինգհամը ասել է. «Մենք հիշում ենք այն, ինչի մասին մտածում ենք»: Հետևաբար՝ մտածողությունն ու հիշողությունը ոչ թե հակադիր բաներ են, այլ փոխկապակցված: Անընդունելի են գիտելիքի, հիշողության դերը նսեմացնող մոտեցումները: Նոբելյան մրցանակակիր Ջեյմս Ուոթսոնը, որը ԴՆԹ հեղափոխության հեղինակներից

է, ճշում է. «Երբ ես փորձեցի վերլուծել իմ հաջողության պատճառները, հասկացա, որ դա կապված է իմ գիտելիքների հետ: Ճեղքումների համար պետք են նոր գաղափարներ, բայց դրանց հիմքը գիտելիքներն են: Իսկ գիտելիքներ ունենալու համար պետք է շատ կարդալ»:

Ժամանակակից հայերենի ուղղագրությունն ունի երեք սկզբունք՝ հնչյունական, ավանդական և ձևաբանական, որոշ լեզվաբաններ այս սկզբունքներին հավելում են ևս երկուսը՝ ստուգաբանական սկզբունքը և իմաստային գործոնը:

Ըստ հնչյունական սկզբունքի՝ բառերը գրվում են ուղղախոսական արտասանությանը համապատասխան, և ուղղագրություն այդ դեպքում հիմնվում է բառի հնչույթային վերլուծության և գրաբանության կանոնների վրա: Ժամանակակից հայերենի տառագրությունը հնչյունական է. հիմնականում ինչպես արտասանվում են բառերը, այնպես էլ գրվում են, ինչպես՝ դաշտ, բժիշկ, պատյան, գրիչ, գիրք և այլն: Սակայն պետք է նշել, որ հնչյունական սկզբունքով գրվող բազմաթիվ բառերի մեջ առկա են գրության հնարավոր տարբերակներ: Խոսքը վերաբերում է հատկապես այն բառերին, որոնց մեջ հնչույթներն իրենց դիրքային հատկանիշներով նման են գրության ավանդական տարբերակներին:

Հայերենում ձևաբանական սկզբունքի կիրառման հետևանքով գրության և արտասանության անհամապատասխանությունը վերաբերում է միայն բաղաձայններին, երբ նրանց փոխազդեցական հնչյունափոխությունը գրի մեջ չի արտահայտվում, օրինակ՝ վազ/ս/f, որպես/զ/զի, կող/խ/f, մեղ/խ/f, -ան նախածանցը բ, պ, փ բաղաձայններից առաջ և այլն:

Ձևաբանական սկզբունքի կիրառման հետևանքով կարող են խախտվել գրաբանության կանոնները: Այսպես՝ ըստ հայերենի գրաբանության կանոնների՝ է, օ հնչույթները բառամիջում գրվում են ե, ո, տառերով, իսկ ը-ն չի գրվում, սակայն ձևաբանական սկզբունքի համաձայն՝ ձևույթները բառաբարդման ժամանակ պետք է պահպանեն իրենց գրաձևը, հետևաբար է, օ, ը տառերը բառամիջում և բառավերջում գրվում են, երբ առանձին արմատի սկզբնատառ են:

Փոխակերպումները տեղի են ունենում նորհասկացությունների գոյացման ճանապարհով, իսկ դրանց գոյացումը ենթադրում է նախկին գաղափարների վերանայում: Յուրաքանչյուր նախկին փորձառություն մտածողության կառույցների կամ կաղապարային նմուշների հիմքն է կազմում: Ի վերջո, մենք կարող ենք իմանալ միայն այն, ինչ ի վիճակի ենք փորձարկել: Այս մոտեցումը հատկապես կարևոր է ավագ դպրոցի ուսուցիչների համար, քանի որ ավագ դպրոցի աշակերտները ունեն հենքային գիտելիքներ, որոնց խորացումը կբերի նոր գաղափարների և գիտելիքների:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

1. ԻՆՉՊԵ՞Ս ԽԹԱՆԵԼ

Ուղղախոսություն և ուղղագրություն: Մարդիկ բառերը արտասանում են տարբեր եղանակներով: Բայց գրական լեզուն ունի ամեն մի բառի արտասանության ճիշտ եղանակը, որը պարտադիր է հայերեն խոսող բոլոր մարդկանց համար:

Ուղղախոսությունը ճիշտ խոսելու և գրվածը ճիշտ կարդալու բոլոր կանոնների ամբողջությունն է:

Բառը կազմված է հնչյուններից. հնչյունը մենք լսում և արտասանում ենք:

Գրավոր խոսքում հնչյունի պայմանական նշանը տառն է: Տառը կարդում ենք և գրում:

Որևէ լեզվի տառերի հաջորդական դասավորվածությունը կոչվում է այբուբեն (անունն առաջացել է հայերենի առաջին երկու տառերի անուններից՝ Ա-այբ, Բ- բեն:

ԱՑԲՈՒԲԵՆ: Այս բառը հայերենի բառապաշար է մտել հունարեն բառի պատճենման արդյունքում (ալֆաբեթ՝ ալֆա +բեթա՝ հունական այբուբենի առաջին երկու տառերի անունները): Ճիշտ այդ ձևով է ստեղծվել հայերեն այբուբեն (այբ+ու+բեն) բառը: Այբուբենը լեզվի հնչյունների համար ստեղծված գրային նշանների համակարգ է, որի մեջ դրանք գերկայանում են որոշակի, ընդունված դասավորությամբ:

Մեսրոպյան այբուբենն ուներ 36 տառ: Այն սկսվում էր Ա-ով և ավարտվում Ք տառով: Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած այբուբենն առանց էական փոփոխության մեզ ծառայում է շուրջ 1700 տարի: 12-րդ դարում անհրաժեշտության բերումով հայոց այբուբենը համալրվեց ևս երկու տառով՝ օ, ֆ:

Հայոց այբուբենի տառերը գործածվել և այժմ էլ մասամբ գործածվում են թվային արժեքներով: 36 տառերը համակարգված են չորս շարքով. առաջին շարքում միավորներն են, երկրորդում՝ տասնավորները, երրորդում՝ հարյուրավորները, չորրորդում՝ հազարավորները:

Այսպես՝

Ա – 1	Ժ - 10	Ճ – 100	Ռ - 1000
Բ - 2	Ի - 20	Մ - 200	Ս - 2000
Գ–3	Լ - 30	Ց - 300	Վ – 3000
Դ - 4	Խ – 40	Ն - 400	Տ - 4000
Ե - 5	Ծ - 50	Շ - 500	Ր - 5000
Զ - 6	Կ - – 60	Ո - 600	Ց - 6000
Է - 7	Հ – 70	Չ - 700	ՈՒ- 7000
Ը - 8	Ձ – 80	Պ - 800	Փ - 8000
Թ - 9	Ղ – 90	Ջ - 900	Ք - 9000

Եթե, օրինակ, ցանկանում ենք գրել 1915 թիվը, ապա նախ գրում ենք հազարավորը ցույց տվող տառը, ապա՝ հարյուրավորը, տասնավորը և վերջապես՝ միավորի տառը, այսինքն՝ ՌՋԺԵ: 2009 թվի տառային համարժեքն է՝ ՍԹ:

Հայերեն տառերն ունեն իրենց անունները

Ա – Այբ	Ժ – Ժե	Ճ – Ճե	Ռ – Ռա	Ֆ – Ֆե
Բ – Բեն	Ի – Ինի	Մ – Մեն	Ս – Սե	
Գ – Գիմ	Լ – Լյուն	Ց – Հի	Վ – Վեվ	

Դ – Դա	**Խ – Խե**	**Ն – Նու**	**Տ – Տյուն**
Ե – Եչ	**Ծ – Ծա**	**Շ – Շա**	**Ց – Ցո**
Զ – Զա	**Կ – Կեն**	**Ո – Վո**	**Փ – Փյուր**
Է – Է	**Հ – ՀոՁ – Ձա**	**Ր – Րե**	**Ք – Քե**
Ը – Ըթ	**Ջ – Ջա**	**Պ – ՊեԻ(ւ) – Վյուն**	**և--Եվ**
Թ – Թո	**Ղ – Ղատ**	**Ջ – Ջե**	**Օ – Օ**

Հայերենի յուրաքանչյուր հնչյուն ունի իր տառը: Սակայն կան շեղումներ.

1. է հնչյունի համար ունենք է և ե տառերը.
2. օ հնչյունի համար՝ օ և ո տառերը.
3. յէվ կամ էվ հնչյունախմբերի համար՝ և /Եվ/ տառը.
4. կան նաև չարտասանվող, բայց գրվող տառեր. հ-ն չի լսվում, բայց գրվում է աշխարհ, խոնարհ, շնորհ, ճանապարհ բառերում.
5. կան արտասանվող հնչյուններ, որոնք չեն գրվում՝

- երկու բաղաձայնների միջև ը հնչյունը լսվում, բայց չի գրվում՝ կտրտել, արտասանվում է՝ ԿԸՏԸՐՏԷԼ, Մկրտիչ, արտասանվում է՝ ՄԸԿԸՐՏԻՉ.
- երկու ձայնավորների միջև յ հնչյունը լսվում, բայց չի գրվում՝ գրեի, արտասանվում է՝ ԳՐԵՑԻ, Գայանեից, արտասանվում է՝ ԳԱՅԱՆԵՑԻՑ, վերարկուով, արտասանվում է՝ ՎԵՐԱՐԿՈՒՑՈՎ և այլն:
- բառասկզբում լսվող յէ-ն գրվում է մեկ տառով՝ է. երազ, արտասանվում է՝ ՑԷՐԱԶ. երեկո, արտասանվում է՝ ՑԷՐԷԿՕ.
- բառասկզբում լսվող վօ-ն գրվում է մեկ տառով՝ ո. որս, արտասանվում է՝ ՎՕՐՍ. ոգնի, արտասանվում է՝ ՎՕԶՆԻ: Այսինքն՝ կան դեպքեր, երբ հնչյունները բառի մեջ ավելի շատ են, քան տառերը: Օրինակ՝ ոտք բառի մեջ լսում ենք 4 հնչյուն՝ ՎՕՏՔ, բայց գրում ենք 3 տառով՝ ոտք, ՆԱՅԷՎ բառում լսում ենք 5 հնչյուն, բայց գրում ենք 3 տառով՝ նաև:

Կան նաև դեպքեր, երբ հնչյուններն ավելի քիչ են, քան տառերը, օրինակ՝ արտասանում ենք ԱՇԽԱՐ - 5 հնչյուն, բայց գրում ենք 6 տառով՝ աշխարհ:

Ուղղագրությունը բառերը ճիշտ գրելու և ճիշտ կարդալու բոլոր կանոնների ամբողջությունն է:

Ուղղագրություն, որևէ լեզվի համար հանրության կողմից ընդունված գրելու կանոնների համակարգը:

Ամեն մի լեզու հետևում է որոշակի ուղղագրության սկզբունքի (սկզբունքների): Առավել հայտնի են ուղղագրական հետևյալ սկզբունքները՝ հնչյունական կամ հնչույթային, պատմական կամ ավանդական, ձևաբանական,սիմվոլիկ, բառակազմական սկզբունքները: Հայերենին հատուկ է գերազանցապես հնչյունական և պատմական սկզբունքը, ռուսերենին՝ հնչյունականը և ձևաբանականը, անգլերենինը, ֆրանսերենինը՝ հիմնականում պատմականը:

Հնչյունական սկզբունք

Հնչյունական գրի մեջ յուրաքանչյուր հնչույթի համապատասխանում է մի տառ, և բառերը գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Հնչյունական գրի սկզբունքի վրա է հիմնված այբուբենների մեծ մասը ստեղծման ժամանակ: Հայերենի նոր ուղղագրությունը փորձում է հետևել հնչյունական սկզբունքին:

Ձևաբանական սկզբունք

Ձևաբանական սկզբունքը հիմնված է բառի միատեսակ գրության վրա, անկախ նրա արտասանությունից՝ թեքման կամ բառակազմության ժամանակ: Շատ լեզուներում բառերը, ստանալով բառակազմական կամ բառահարաբերական մասնիկներ, փոխում են իրենց արտասանությունը, ենթարկվում են հնչյունափոխության, բայց նրանց գրությունը մնում է անփոփոխ: Օրինակ՝ ռուսերեն дом «տուն» հոգնակի սեռականում արտասանվում է дамов, բայց գրվում է домов:

Պատմական սկզբունք

Պատմական սկզբունքը հիմնված է բառերի ավանդական գրության վրա, որի շնորհիվ պահպանվում է բառերի հնից ավանդված գրությունը, հակառակ այն բանին, որ նրանց արտասանությունը փոխվել է: Ժամանակակից արևելահայ գրական լեզվի ուղղագրությունը միայն մասամբ է պատմական (ավանդական): Այս սկզբունքով են, օրինակ, գրվում հետևյալ բառերը՝ երգ, երկիր, արջ, որբ, վարդ, մարդ:

Ստուգաբանական սկզբունք

Պատմական գրության մի տեսակն է ստուգաբանական սկզբունքը, երբ բառը գրվում է համապատասխան իր ստուգաբանության: Օրինակ՝ հայերենում, հակառակ այն կանոնին, որ է, օ տառերը գրվում են միայն բառասկզբում, մենք գրում ենք նաև բառամիջում՝ այսօր, ապօրինի, վայրէջք, մանրէ, հօգուտ:

Սիմվոլիկ սկզբունք

Սա հիմնականում համանուններին գրությամբ զանազանելու համար է: Հայերենը մասամբ հետևում է այս սկզբունքին՝ Ասիա (աշխարհագրական անուն)-Ասյա (անձնանուն): Սիմվոլիկ սկզբունքին են պատկանում նաև հապավումն:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Քանի որ այսօր դպրոցում հայոց լեզվի դասավանդումը զուգակցվում է երկու կողմ՝ տեսական լեզվաբանական գիտելիքներ և լեզվի գործնական կիրառություն, շատ կարևոր է, որ հայոց լեզվի ուսուցիչը հստակ պատկերացնի իր գործունեության առաջնային նպատակները: Ելակետային է այն սկզբունքը, որի համաձայն առավելությունը տրվում է բուն լեզվի իմացությանը, այսինքն՝ ճանաչողական, հաղորդակցվելու, համագործակցելու, ստեղծագործելու և ինքնուրույն աշխատելու կարողություններին, իսկ տեսական գիտելիքները կոչված են նպաստելու այդ կարողությունների զարգացմանը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ միայն համակարգված և խորը գիտելիքները կարող են վերահսկել կարողությունների և հմտությունների:

Այդ պատճառով էլ հմուտ ուսուցիչը պետք է այնպես պլանավորի դասը, որ բերականական գիտելիքները նպաստեն աշակերտի լեզվի մաքրությանը, օգնեն ձևավորել կարողությունների արժեքների այն համակարգը, որը հասարակությունը ակնկալում է հանրակրթությունից:

Դասի պլան

Ուսուցիչ՝ Ա. Մովսիսյան

Դասարանը՝ 5-րդ

Դասի թեման՝ Դ-տ-թ բաղաձայնների ուղղագրությունը և ուղղախոսությունը

Դասի նպատակները և խնդիրները՝

- իմանալ հայերենի ուղղագրական և ուղղախոսական կանոնները
- տարբերել դ, տ, թ բաղաձայնների արտասանությունը և գրությունը
- կարողանալ գրավոր և բանավոր խոսքում ճիշտ կիրառել ուղղագրական և ուղղախոսական կանոնները
- ձևավորել անսխալ գրելու կարողություն
- բառապաշարի հարստացում
- կարողանալ ընկալել բառի կազմությունը, բառակազմական վերլուծության միջոցով բացատրել բառի ուղղագրությունը, ճիշտ գրել

Վերջնարդյունքներ՝

- Անսխալ կգրի
- Կկատարի բառակազմական վերլուծություն

Դասին անհրաժեշտ մեթոդներ, հնարներ, դիդակտիկ պարագաներ – ԽԻԿ համակարգ, խմբային աշխատանք, եռաթև աղյուսակ, առաջադրանքների քարտեր

Դասի ընթացքը:

1. **Խթանում:**

- Բնութագրել հայերենի բաղաձայնները, դ-տ-թ բաղաձայնների արտասանությունը և գրությունը:
- Գրատախտակին գծել եռաթև աղյուսակ, լրացնել.

լսվում է փ, գրվում է բ լսվում է f, գրվում է գ լսվում է թ, գրվում է դ

------ ----------

2. **Իմաստի ընկալում:**

Ա. տնային առաջադրանքի ստուգում

Բ. Դ-տ-թ-ի ուղղագրություն ունեցող բառերը խմբավորել՝ նման վերջավորություն ունեցող, գործողություն ցույց տվող, անձ ցույց տվող, գրել գրատախտակին.

բարդ, զարդ, վարդ, մարդ, ջարդ, բերդ, բուրդ

բրդել, դրդել, լերդանալ, կարդալ, հաղորդել, վրդովել լյարդ, նյարդ, երդ /և այլն/

Գ. բացատրել լաջվարդ, խորդուբորդ, դրդել, վաղորդայն, վաղորդյան, վրդովել բառերի իմաստները, կազմել նախադասություններ:

3. **Կշռադատում /խմբային աշխատանք/:**

Ա.Բացատրել հարանունները, զույգը գործածել նույն նախադասության մեջ. որթ-որդ, հորթ-հորդ, հարթ-հարդ, փտել-փթթել, խայտալ-խայթել

Բ. Կազմել բառեր՝

- զարդ և զարթնել արմատներով, գրել այունակներով.
- որդ, -ուրդ ածանցներով
- ընդ ածանցով, ընթաց/f/ արմատով

Գ. Գրել հոմանիշները /բառերի մեջ պետք է լինեն դ, տ, թ բաղաձայններ/ Ուրախ, վարար, անհարթ, կապույտ, ժամանակակից, զուգել, հրահրել,

Դ. Լրացնել տառը, բացատրել կազմությունը.բառակազմական վերլուծություն Հարդագողի ճանապարհ, գմբեթարդ, Վարդավառ, անձրևորդ, սաղարթախիտ, թատերական, ակնթարթ:

Ե. Կազմել նախադասություններ դ-տ-թ-ի ուղղագրություն ունեցող բառերով: Օրինակ՝ Արդյո՞f արդեն արդար արդյունք կլինի:

4. **Գնահատում:**

5. **Տանը:**

Առաջադրանք 6, 7 /հորինել հեքիաթ, լրացնել խաչբառը/:

Դաս 1 . Բաղաձայնների ուղղագրությունը և ուղղախոսությունը.

Գ-Կ-Ք

Հարցեր առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Սովորաբար ինչպե՞ս են արտասանվում կ և f հնչյունները:
2. Ն-ից կամ ձայնավորից հետո գ տառը ինչպե՞ս է արտասանվում:
3. Ր-ից հետո գ տառը ինչպես է արտասանվում

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կ-ի և f-ի գրության և արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ կոշիկ, կայծակ, քայլ, քնքուշ և այլն:
2. Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում ն-ից կամ ձայնավորից հետո արտասանվում է f հնչյունը, սակայն գրվում է գ տառը՝անգամ, ավագ, զուգել, էգ, էգուց, թագավոր, ծագել, ծեգ, կարագ, հագնել, հոգնել, հոգի, հոգնակի, ձագ, ձիգ, ճիգ, ճրագ, ճրագու, մարագ, մուգ, շոգ, շոգի, ոգի, պատարագ, սուգ, , ուրագ, օգուտ և այլն:
3. Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում բ-ից արտասանվում է f հնչյունը, սակայն գրվում է գ տառը՝ երգ, թարգմանել, կարգ, մարգարե, մարգարիտ, պարգև,տեգր և այլն:

Իմանալ հետևյալ բառերի ուղղագրությունը անգիր:

Ջիգզագ, Վարդգես, շողոքորթ, թանկագին, թանգարան, փափագել, պապակված, կարգ, կառք, փեղկ, Օգսեն, նախկին, նախքան, չոքել, չօգնել, ծեգ, հոգալ, ճաքել, ճկվել, առածգական, եղերերգ, տաքդեղ, հեղգ, զուգարան, սերկևիլ, անողոք, շնկշնկան, բարվոքել, ոգելից, մեղք, մեղկ, պատրույգ, վարակ, մարագ, նորոգել, բազրիք, անհարկի, հաստիք, դրասանգ, սրնքակալ, այգեվետ, վարքուբարք, ճիգուճանք:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բաց թողած տեղերում լրացրու գ, կ, f.

ա/ ամո…ից, այ…եկութ, անար…անք, անդրավարտի…, անկար…, անհա…ուրդ, ապա… ինվել, առած…ական, առին…նել, թափթփու…, հո…եմա, քաշքշու…

բ/ անօ…ուտ, ար…ելք, արմուն…, արտասու…, ար…այական, բարեհո…ի, բարեկար…, բեր… ատու, գո..ավոր, բարեհո..ի, եր..ահան, ծե.., թա..ուհի, կար..ուկանոն, հեղ..(ծույլ,ալարկոտ)

գ/ անհո..ի, բար.., բարվո..ել, բացա..անչություն, բերան..սիվայր, գլխահա.., գո..նոց, զու.. երգ, կար..ապահ, հա..նել, հե..իաթ, քսու..

դ/ անհար..ի, արևել.., Գրի..որ, դասալի.., դասակար.., դե..երել, դիր.., դիցու.., դրասան.., եգեր.., եղերեր.., երաշխի.., եր..նել, եր..րպագել, զի..զա.., գ..եռ (հատապտուղ), հո..եբան

ե/ ա..ցան, եր..ել, երկարածի.., զու..որդել, ընդեր.., թա..ակիր, թաղի.., թան..արան, թան.. արժեք, թար..մանիչ, թնջու…, ի..ական, ժանի.., լե..եռն, լ..տի, ծա..ել

2. Գրել տրված բառերի այնպիսի հոմանիշներ, որոնք գ, կ կամ f ունեն: ա/ տոթ, արքա, պատվագրկել, զարդարել, նվեր

բ/հրամայել, լուսաբաց, ժխտել, ջանալ, ողբ

3. Պարգև, մարգարե, մարգարիտ ,տեգր բառերը գործածել նախադասությունների մեջ:

Դաս 2. Բաղաձայնների ուղղագրությունը և ուղղախոսությունը.

Դ-Տ-Թ

Հարցեր առարկայի չափորոշչային միջին մակարդակի պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Սովորաբար ինչպե՞ս են արտասանվում տ և թ հնչյունները:
2. Ր- ից, ն-ից կամ ձայնավորից հետո դ տառը ինչպե՞ս է արտասանվում: 3. Ինչպե՞ս տարբերակել հետևյալ բառերը:

Հարթուկ-արդուկ	զարդ-զվարթ	սպրդել- սփրթնել
Հարթամանդակ-հարդաճաղախ	բրթել (հրել)-բրդել (մանրացնել)	խրտվիլակ- խրթին
Երդիկ-երթ	որթատունկ-որդ	Վարդևան-Վրթանես

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տ-ի և թ-ի գրության և արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ տոն, կայտառ, հարթ, սաղարթ և այլն:

2. Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում ր-ից, ն-ից կամ ձայնավորից հետո արտասանվում է թ հնչյունը, սակայն գրվում է դ տառը՝անդամ, արդար, արդեն, արդյոք, արդյունք, բարդ, բերդ, բրդել/մանրացնել/, բուրդ, դադար, դդում, դրդել, երդիկ, երդում, զարդ, լաջվարդ/մուգ երկնագույն/, լերդանալ, լյարդ, խնդիր, խորդուբորդ, կարդալ, կենդանի, հաղորդել, մարդ, Վարդգես, վրդովել, օդ, օրհորդ և այլն:

3. Իմանալ հետևյալ բառերի ուղղագրությունը անգիր:

Հարթուկ-արդուկ	զարդ-զվարթ	սպրդել- սփրթնել
Հարթամանդակ-հարդաճաղախ	բրթել (հրել)-բրդել (մանրացնել)	խրտվիլակ- խրթին
Երդիկ-երթ	որթատունկ-որդ	Վարդևան-Վրթանես

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Բաց թողած տեղերում լրացնել Դ, Տ կամ Թ.

ա/ Ալվար.., ականակի.., ակն..ար.., աղո., աճուր.., այգեկու.., այ.. (դա), այ.. (թուշ), ար..յոք, ար..ուզար.., արտահեր.., արտասու.., բր..ոտ, բր...ել (հրել), բր..ել մանրացնել), գաղ.., գաղ..նապահ, հար..ուկ, ար..ուկ, աղոք.., գաղ..նիք, գ..ալ (սպասք), գ..ալ (խղճալ), կար..ալ, կորնթար.., հաղոր..ում, հանդար.., հաջոր..ել, հաճման..ամ, փու..կոտ, քաջոր..ի, օ..անցք:

2. Գրել տրված բառերի այնպիսի հոմանիշներ, որոնք դ, տ կամ թ ունեն: Դժվար, խելագար, հայտնել, կայծակ, անհարթ, ծուղակ, աղաչել, օտար, իզուր:

3. Գրել տրված բառերի այնպիսի հականիշներ, որոնք դ, տ կամ թ ունեն:

Քնել, դեռ, մեռած,լուսանալ, նեղ, հարազատ, տխուր:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ցանկացած թեմայի համակարգված ուսուցումը ենթադրում է առանձին դասաժամերի բովանդակային շարունակական ամբողջականություն: Այս առումով թեմաների ուսուցումը կարելի է արդյունավետ կազմակերպել կառուցողական մեթոդների,հատկապես գործնական աշխատանքների կիրառմամբ:

Սրանք նպաստում են սովորել սովորելու կարողունակության զարգացմանը, երբ աշակերտները ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Աշակերտները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն:

Կազմակերպման տարբեր եղանակներով տարատեսակ առաջադրանքներ կատարող աշակերտները բնականաբար չեն կարող միաժամանակ ավարտել իրենց աշխատանքը: Շատ ուսուցիչներ վախենում են նման դեպքերում առաջացող «անգործության ընդմիջումներից»: Կառուցողական մեթոդով աշակերտներին հանձնարարություններ տալը, կանխում է աշակերտների անգործ մնալը և այդ ընդմիջումները նրանք լրացնում են իրենց ունակությունները զարգացնելուն ուղղված աշխատանքով կամ օգնում են նրանց հետ չմնալ:

Վերլուծելով ստացված տվյալները կարող ենք փաստել, որ հետազոտության ընթացքում աշակերտների մոտ նկատվում է հետաքրքրություն առարկայի նկատմամբ, նրանք ավելի մոտիվացված են և անհամբերությամբ սպասում են հաջորդ դասին իրականացվելիք հետաքրքիր աշխատանքներին: Դրա հետևանքով նրանք ավելի պատրաստ են գալիս դպրոց՝ ապահովելով իրենց գիտելիքների ցուցադրումն ու ակտիվ մասնակցությունը:

Հետազոտության ընթացքը հիմնված էր համագործակցային խմբային աշխատանքների վրա: Յուրաքանչյուր խումբ (նախօրոք ձեռք բերված համաձայնությամբ) մյուսներին որևէ հարց էր ուղարկում, իսկ վերջիններս նրանց էին ուղարկում դրա ճիշտ պատասխանը: Այդկերպ խմբերն ինքնաստուգում էին իրականացնում:

Ուսուցման համագործակցային եղանակներից յուրաքանչյուրն իր կիրառությունն ունի, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կարող է կիրառվել տարբեր իրավիճակներում:

Ելնելով հետազոտության արդյունքներից ուսուցման եղանակն ընտրելիս պետք է հաշվի առնել՝

- աշխատանքի համար հատկացված ժամանակը,
- վարժությունների տեսակները,
- դասերի տեսակները,
- բովանդակությունը,

- փոխկախվածության աստիճանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքում նախ փորձել եմ անդրադառնալ 21-րդ դարի դպրոցաշինության խնդիրներին, դրանցից բխող ուսուցման նոր մոտեցումներին և մեթոդներին,գործնական աշխատանքների արդյունավետ ազդեցությանը:

Դպրոցը հասարակական կյանքի այն բնագավառն է, որն ամենից շատ է ենթակա փոփոխությունների ու տեղաշարժերի:

Մեր ընտրած թեման () լեզվի ամենագործածական բաժիններից է, քանի որ առանց ուղղագրական կառույցների հնարավոր չէ արդյունքի հասնել: Թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճանաչելու լեզվական այլընտրանքային ձևեր, որոնք ունեն ուղղագրական արժեք:

Բառերի ուղղագրության ուսուցումը պատմական զարգացման հետևանք է, որի ընթացքը նույնպես լեզվական ուսումնասիրության նյութ է:

Հենց այս նպատակադրումով էլ մենք կարևորում ենք հնչյունաբանություն բաժնի, մասնավորապես ուղղագրության ուսուցումը:

Ինչպես այս բաժնի, այնպես էլ ողջ քերականության ուսուցման գործին նպաստում են գործնական աշխատանքները, որոնք փորձել եմ կիրառել ներկայացրած դասերում:

Կարծում եմ՝ ուղղաբրության դասավանդման մեթոդիկան դեռևս չուսումնասիրված և չբացահայտված խորքեր ունի, որոնք կարիք ունեն մանրակրկիտ քննության:

Իմ կարծիքով հմուտ ուսուցչի խնդիրներից մեկն էլ այն է, որ թափանցի այդ խորքերը և նորագույն մեթոդների ու մեթոդական հնարների կիրառման և սեփական ստեղծագործական մտքի շնորհիվ նպաստի մայրենիի գործնական ուսուցմանը, սովորողների հաղորդակցման կարողությունների և ունակությունների զարգացմանը, նրանց մղի ստեղծագործական գործունեության, ձևավորի նրա արժեքային համակարգը, որի արդյունքում կդաստիարակվի բարձր գիտելիքներով և համամարդկային արժեքներ կրող մարդ և քաղաքացի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լ. Կ. Եզեկյան, Հայոց լեզու,Երևան,ԵՊՀ հրատարակչություն,2005,398 էջ,
2. Ղարիբյան, Արարատ Սահակի,Հայոց լեզվի ուղղագրության հիմունքները և ուսուցման մեթոդները,Երևան: Պետհրատ-1935. - էջ 55,
3. Ժամանակակից հայոց լեզու , Երևան,1982,էջ 28:
4. Է. Բ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, Մակմիլան Արմենիա, 2009, էջ 109,
5. Հ. Զ. Պետրոսյան, Հայրենագիտական բառարան, Երևան, «Հայաստան», 1987, էջ 595-598:
6. Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարագյուլյան, Լեզվաբանական բառարան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975, էջ 300: